

թիւններն ալ: Նոյն ատեն կրկին և կրկին կը յանձնարարեմ բոլոր անզիլագէտ հետաքրքիրներուն որ իրենց մատենադարանին համար չզլանան այս աժանագին հրատարակութիւնը, Հայ ազգին մշակութային ծաւալման մէկ գեղեցիկ էջին արժանի յիշատակարանը:

Յ. ՔԻՒՐՏՅԱՆ

«ԱՐԵՆԱԳԱՍ» (Երթուածներ Բեւզանդ թօփալեանի. տպ. Բարեզ, 1936)

Նախ հեղինակին մականունի մասին:

Յորմէհեաէ հայութիւնը վնասուեցաւ թուրքիայէն, անինայ կերպով կոտորակուելէ, նախատուելէ, ոտնակոխ ըլլալէ ետք, մեզի համար անըմբռնելի է թէ ինչպէս հայեր, այն ալ մտաւորական, գրող, թրքավարի մականուններով իրենց գոյութիւնն ընդ քարշ կ'ածեն եւրոպական պողոտաներու վրայ<sup>1</sup>:

Մեզի ցաւ կը պատճառեն անոնք՝ որ հայու սիրտ ունին և թրքավարի մականուն:

Զգուանք կը պաճառեն անոնք՝ որ հայու սիրտ չունին բայց ունին հայավարի մականուն:

Մեզի համար կատարեալ են ու սիրելի անոնք՝ որ հայու սիրտ ունին և հայու մականուն:

«Թօփալեան» ո՛չ հայաչունչ է, ոչ ալ գեղիմաստ:

Այդ մականունին և նուրբ, գեղապաշտ բանաստեղծի մը միջև կայ խոտոր համեմատութիւն:

Թօփալեան բանաստեղծ ու նկարիչ է միանգամայն: Յիրաւի «Արեւագալ»ին մէջ, ոտանաւորներու կողքին դիրք գրաւած են նաեւ չորս նկարներ, (չեմ կրնար ըսել որ էջերուն վրայ կը գտնուին անոնք, որովհետեւ նորոյթի համար, էջերը թուագրուած չեն, այնպէս որ եթէ զիրքը փոխ տաս բարեկամիդ և պատահի որ ան սիրէ ոտանաւորներէն մէկը և փրցնէ երկու էջ, չես անդրադառնար անմեղ գողութեան):

Առաջին նկարը գրքին կողքը կը զարդարէ: Բարձունք մ'է, որուն վրայ կ'ելլեն երկու է՝ ակներ՝ պարելու ձեռով: Մինչդեռ, ըստ մեզի, բարձունքի մը վրայ կարելի չէ ելլել առանց հողը ճանկութելու, առանց մաքառելու, առանց արիւնելու:

Երկրորդը՝ ինքնանկար մ'ըլլալ կը թուի: Երիտասարդ մ'է կէս մէջքէն վեր՝ մերկ, ձախ թեւը՝ դէպի դուրս: Բայց ո՛չ կուրծքը, ո՛չ ուսը,

ոչ ալ թեւը շարժում ունին: Գնդերներ չկան: Գէմքը «մութ» է, գլխուն մէջ կան մտահոգութիւններ, բայց այդքան: Չեն խօսիր:

Երրորդ նկարը՝ խեղճութիւն է:

Չորրորդ նկարը՝ «Մեկնում անվերադարձ» ոտանաւորին ընկերացած է: Շոգենաւր կը մեկնի (կը յիշէ՞ք դպրոցական սեղաններու վրայ ձեր գծած շոգենաւրը, տակի ալիքներով միտօին, ո՛չ մէկ տարբերութիւն, կատակ չեմ ըներ) և աղջկան դէմք մը, որուն աչքերը յաջողած են տրտում ըլլալ, ու կը նային այլուր, շոգենաւին հակառակ ուղղութեամբ:

Չենք գիտեր թէ Թօփալեան ինչո՞ւ այս «խաղալիքները» տպած է:

Տիրան Չրաքեան եւս նկարներ յօրինած է «Ներաշխարհ»ը անդամելով հանդերձ, բայց իր նկարները ներկայանալի էին:

Չարութեան համար չէ որ կ'ընենք այս դիտողութիւնները: Գիտենք որ հայոց մէջ՝ մարդիկ կամ կը գողեն, կամ լուռ կը մնան, երբեք ճշմարտութիւնը չեն յայտարարի որպէսզի գէշ մարդ չըլլան, ինչպէս նաեւ որպէսզի օգտակար ալ չըլլան:

Մեզի համար չկայ աւելի մեծ գոհութիւն, քան տեսնել վաւերական տաղանդով օժտուած հայորդիներ:

Թօփալեան, իբրև նկարիչ, այս դասակարգին չի պատկանիր: Ու լաւ կ'ընէ, իր բարիքին համար, եթէ ապագայ հատորները նման նկարներով չզարդարէ:

«Արեւագալ»ը ձեռք աննելէ առաջ՝ Թօփալեանի անուան ծանօթ էինք արդէն: «Զերբազատում» վերնագրով իր մէկ ոտանաւորը կարգացրէ էինք «Անահիտ»ի մէջ (թիւ 1 - 2 - 3, Յունուար - Մայիս 1936) որուն մասին գրախօսական մը հրատարակէր էինք Ամերիկայի «Նոր Գիր»ին մէջ: Խօսելէ ետք «Անահիտ»ի էջերը գրաւող միւս գրութեանց մասին, կարգը պիտի գար անշուշտ «Զերբազատում»ին, գոր «գլուխ գործոց» մը չէինք հռչակած:

«Նոր Գիր»ի մարդիկը պոլշեիկ են եղեր, բարեկամ են եղեր Թօփալեանի, գրախօսականս հրատարակէր էին անխիղճ կերպով աղաւաղելէ ետք զայն, և բողոքիս վրայ՝ ամէնքն ալ, «դուրդրից ու խնամի» յարձակէր էին վրաս իբրև...

1. «Թրքավարի մականուններ, կ'ատեմ մեզ», (Տե՛ս «ՅԱՌԱՋ», 13 Ապրիլ, 1937), Հ. Քաջարենցի յօդուածը: